ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/33

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մկրտչյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 20.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ»

ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 14 մայիսի 2019թ.-ի թիվ 5 արձանագրությամբ ընկերությանը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձի 20.05.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 24.05.2019թ. նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 24.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.05.2019թ.:

2. «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից, որը գտնվում է Վ. Սարգսյան 3/3 հասցեում, կազմակերպվել է շինարարական-ասֆալտապատման աշխատանքների մրցույթ:

Մեր կազմակերպությունը ունենալով բավականին մեծ փորձ տվյալ ոլորտում ցանկացել է և մասնակցել է մրցույթին:

Մրցույթի առաջին փուլից հետո պարզվել է. որ մեր կազմակերպությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Մրցույթի հանձնաժողովը որոշել է հարցում անել ՀՀ ՊԵԿ, որպեսզի պարզի թե մեր ընկերությունը ունի ժամկետանց պարտքեր թե ոչ, և պարզի Ընկերության նախորդ երեք տարվա շրջանառությունը բավարարում է թե ոչ:

Ըստ մրցույթի հանձնաժողովի ստացվել է ՊԵԿ պատասխանը այ մասին, թե իբր ընկերությունը ունի ժամկենաց պարտքեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով:

Մենք ցանկանում ենք հավաստել, որ հնարավոր չէ ընկերությունը ունենա պարտավորություն, դեռ ավելին, ունի գերավճարներ:

Որպես նշվածի մասին ապացույց կցում ենք տեղեկանքների պատճենները:»:

Բողոքներ քննող անձին խնդրել են բողոքին ընթացք տալ, «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից' որպեսզի վերականգնվի ընկերության իրավունքը, քանի որ ընկերության գինը եղել է նշված գնային առաջարկներից նվազագույնը:

Ընկերությունը 20.05.2019թ. ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Որպես բողոքի իրավական հիմք ցանկանում եմ նշել, որ խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 3, 6. 7 և 34 հոդվածների պահանջները, քանի որ ընկերությունը առանց իրազեկված լինելու այն մասին որ ունի պարտք՝ դրոշմանիշային, հայտ է ներկայցրել և մասնակցել է մրցույթին:»:

Բողոքներ քննող անձին խնդրել են դադարեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 14 մայիսի 2019թ.-ի թիվ 5 արձանագրությամբ ընկերությանը մերժելու մասին որոշումը:

3. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.05.2019թ. գրությամբ դիմել է «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից 20.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ներկայացնելով բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները, նաև հայտնել է, որ.

«Շինարարական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արարատ Ճանշին» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել նշված ընկերությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 03.05.2019թ. ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա (այն է՝ 02.05.2019թ.) դրությամբ

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Նշված հարցմանն ի պատասխան՝ Կոմիտեի կողմից Կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ 08.05.2019թ. տրամադրվել է տեղեկատվություն, համաձայն որի՝ «Արարատ Ճանշին» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը, այն է՝ գնային առաջարկի (384,240,168 ՀՀ դրամ) մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի քան 50000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 104,000 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 14.05.2019թ. թիվ 5 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում, Կարգի 44-րդ կետի պահանջներին համապատասխան, մերժել է վերոհիշյալ ընկերության հայտը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով:»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով շինարարական աշխատանքների կատարման կարևորությունը, ինչպես նաև ժամկետների սղությունը՝ Բողոքներ քննող անձին խնդրել են հնարավորության դեպքում բողոքի վերաբերյալ որոշումը կայացնել հնարավորինս սեղմ ժամկետներում:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակում, ի թիվս այլ մասնակիցների 02.05.2019թ. հայտ է ներկայացրել նաև «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 03.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (02.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 104 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը, 14.05.2019թ. թիվ 5 արանագրությամբ կայացված որոշմամբ մերժվել է որ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղն զբաղեցնող մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցնող՝ «Ա.Ա.Բ Պրոեկտ» ՍՊԸ-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 02.05.2019թ. դրությամբ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գուամրների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2019թ. Ընկերությանը տրված թիվ 2537 տեղեկանքի համաձայն՝ 104 000 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորությունը գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից 26.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ … գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ՀՀ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. … իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց ընթացակարգի արդյունքում «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն 4-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 03.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (02.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 104 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 02.05.2019թ. դրությամբ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գուամրների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր

կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (02.05.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է համարվի որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն, և անհրաժեշտության դեպքում ընդունվի այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից 20.05.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել դադարեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 14 մայիսի 2019թ.-ի թիվ 5 արձանագրությամբ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**